


Թարգման	14 դրամ
Դասառնություն	20 դրամ
ԱՌԱՋԱՆՈՐԴԱԳԻՏՈՒՆԷՆ	
Խոստովան	4 դր. 50 կ
Պարբեր	50 դրամ
Ելքային	12 ֆրանկ
Ամբերիկա	2 տոյար 50.
Ցայտարարությունների	զեմար
Առաջին երեսում ազատանքը	5 շահի
Չորրորդ	3

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրության հասցեն՝ Պարբեր
Միջճի խմբագրություն կամ Tauris (Perso)
Rédaction du journal «MITK»



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՋԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

№ 6

1912 թ.

ՀԱՐԱԹ 24 ՄԱՐՏԻ

1912 թ.

№ 6

Սրանով լստնում ենք ի գիտություն Թաւրիզի լարգելի հասարակութեան, որ առաջիկայ Ապրիլի 14-ին, շաբաթ երեկոյ, Ղալաի Արամեան դպրոցի թատերասրահում, ուսուցչական խումբը, տեղիս սերողների մասնացումներով՝ յօգուտ նոյն դպրոցի, կհաղայ համաշխարհային հռչակ վայելող Ռուս հեղինակ

Դ. Ա. ՍՏԱ. Ե. Ի. Ս. Կ. Ո. Ի.

ՅԱՆՅԱՆԷ ԵՒ ՊԱՏԻԺ

[Преступление и Наказание] Յանյանայտնի դրաման՝ 7 պատկերով և մի վերջաբանով. Թարգմ. Բնագրից Գրիգոր Աղաջանեան. (Ուսուցիչ)

Տոմարկները, ըստ սովորականի, չեն ուղարկուի և վաղորօք կարելի է ստանալ Ղալաի գաղթողում. Չեն տրուելու նաև կոնտրմարկեր:

Հոգաբարձութիւն
Արամեան և Ս. Աննայեան
Երկսեռ դպրոցների

23 Մարտ 1912 թ.
Թաւրիզ

Արևելքի կրօնական ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ խոշոր դէմքերն ու հիմնադիրները գործունէութեան կեդրոն են ընտրել անգործ և խաղաղ աւանդաւորները: Մերայի նախակարապետը, Յովհաննէս Մկրտիչը, աւագի թագաւորութեան մենակոր լուծիւնից գոչում էր. «Եպաշխարեցէ՛ր, որովհետև մօտեցել է Աստուծոյ թագաւորութիւնը»: Անապատի այդ շանյողողող քարոզչի ձայնը յաճախ լսուում էր և Յորդանանի ափերին, որտեղից մարդկանց մաքրութիւն էր քարոզում և մարքոսել պահանջում, որովհետև ահա իր ետևից գալիս է մէկը, որ հեծանոցը ձեռքից՝ սրբելու է իւր կայր, ցորենը հաւաքելու է ցեսմաբաններում եւ դարմանն այրելու է հրով:

Յայտնում է վերջապէս և Մկրտիչ քարոզեալը՝ հեղ ու խաղաղ արտաքինով: Նա նոյնպէս գործում է անապատում մտնում է ժողովրդի մէջ և ինչ է տեսնում իւր առաջ:

— Մաշուած ու յօգնած զէ՛րքեր, հալածուած ու կեղեքուած հոգիներ. արգարութեան համար կարօտ ճնշուածներ, մի խօսքով ամբողջ էութեամբ տառապած և կեանքի ծանրութիւնից հն ի հն տնեղ մարդիկ, որոնք՝ բոլր կոյրեր, ձեռքերը մեկնած դէպ առաջ ու վեր՝ խաբկափում՝ ճանապարհ են փնտռում, առաջնորդ ըզձում և փրկիչ կանչում:

Յայտնում է Փրկիչը, որի զէմբի, արտաբերած իւրաքանչիւր խօսքի վրայ պարզորոշ նկատում է անապատային յանգուցիչ խաղաղութիւնը: Նա քարոզում է կեանքի բեռան տակ հեղուներին և նրա (կեանքի) նպատակի անորոշութիւնից հիսաթափուածներին. «Մի՛ գրկէ՛ք մի՛ սէ՛ք, մի՛ սպանէ՛ք. աղաբաւ թիւն եւ

իրաւունք արէ՛ք սնակիմ եւ որբեւայրում»: Հին աշխարհի ուսուցման հակառակ, անապատի առանձնութեան մէջ փրկական իւր ծանր կոչումը երկար կշռադատած և ապա վստահ ոյժերով մարդկութեան կարիքներին սիրայօժար ծառայելու համար ասպարէզ եկած Նազովրեցին նո՛ր խօսք, նո՛ր պատգամ է ուսուցանում ծառայելի յաղթահարուած որդիներին:

«Մի՛րեցէ՛ք մեր բեմամիներին, բարի արէ՛ք մեզ ասողներին, եօթանասնեկին եօթ անգամ ներեցէ՛ք մեր եղբօր, փրեցէ՛ք մեր ընկերոջը մեր անձի պէս և զիսեցէ՛ք դէպի կասարելութիւն:

Այս նորօրինակ խօսքերը լսելով՝ միտքարում էին ճնշգրտածները, սակայն լսում ու ատամ էին կրճտեցնում օրէնքի տառակեր ներկայացուցիչները, որոնք իրենց ոտքի տակի հողը կորսուած էին համարում Փրկչի արդարութիւն բուրոյ քարոզներով:

Աշխարհի իմաստութիւնն ասում է. — Վայ նորան, ով արդարութիւն է լսում կամ քարոզում, նորան մահ է սպասում:

Եւ մահով էլ դատեցին Սիրայ ու Արդարութեան քարոզչին և դատեցին օրէնքի ներկայացուցիչները, բահանալապետները, դպիրները և փարիսեցիները, արդարութեան այդ անարդար պաշտօնեաները:

— Դու քարոզում ես իրաւունք ճշմարտութիւն, սէր, ներում, արդարութիւն և կատարելութիւն, ուստի և տոյդ «յանցանքների» համար պէտք է մեռնես, ապացին աշխարհի դօրեղները, անարդարութեան որդեգիրները և խաւարի սիրահարները: Եւ այսպէս՝ փոփոխամիտամբոխն ու բար սիրտ առաջնորդները վրէժխնդրու-

թեամբ լցուած՝ դէպի Գողգոթա հաննցին, Խաչ բարձրացրին մարդկութեան լաւագոյն բարեկամին, սիրոյ անհասանելի քարոզչին, ճշմարտութեան անվահեռ ուսուցողին:

Եսի երկրպագուները, շահով մոլուածները կարծեցին այսպիսով խեղդել և սպանել անմահ ճշմարտութիւնը, յաւիտեանական սէրը:

Սակայն զո՛ւր երազներ. 2ի մեռնում գաղափարը. 2մեռաւ և Մեծ Վարդապետն ու նրա քարոզը. Նա իւր հաւատացեալների համար մահուանից յետ յարութիւն առաւ ճշմարտութեան յաղթանակով:

Ճշմարտութեան համար նորա անձնազոհ լինելը աստուածացրեց նորան իր հետևողների և մարդկութեան աչքում, որոնք դարեւ շարունակ տօնում են գաղափարական այդ յաղթանակը Ջատիկի տօնով:

Սակայն ինչ վիճակում է գտնում մեզ այժմ այդ Ջատիկը:

Մենք պատուէր ունինք եօթանասնեկին 7 անգամ ներել մեր դէմ մեղանշողին, սակայն ինչպէս ենք վարում մենք իրականութեան մէջ. Թեթև, անշահ մի սխալմունքի համար՝ մենք պատրաստ ենք մեր վերջին կոպ. էլ ծախսել և այդ միայն նրա համար, որ մի անգամ մեզ հետ մի հաշիւ ունեցողին սև օրի հասցենք, արիւնք խմենք:

Ո՛ր հարուստը մեզնից մտածեց օգնել այս ու այն տնանկին, այրուն. Ո՛ր ունևորն 100—200 թուման ձեռք բերեց՝ մի խնդրող քաղաքացու, որ նա այդ օգնութեամբ իր տնտեսական բարեկեցիկ կարողանար: Մենք ոչ միայն այդ չենք արել ու անում, այլ զիջել ցերեկ մտածում ինք, երբ կկործանուի մեր հարևանը, որ նրա խորտակմամբ մենք հրճուենք, միակ հարուստը մենք լինենք:

Թողնելով «կրթուած» նոր սերունդին, որ «տգիտութիւն» ու «խաւարամտութիւն» է համարում հեղեղեցի գնալը, մենք ձեզ ենք դառնում քաղաքի հայրեր և եկեղեցու համար կուրծք թակողներ:

Տարիներ են անցնում դուր ժամում չէք երևում. Դուր 1912 տարի անցնելուց յետոյ, այսօր ես նոյնչափ հեթանոս էք, որչափ ձեք նախաբերիստոսեան պապերը:

Այսօր ևս դուր ճշմարտութիւնն ու ճշմարտախօսին նոյն չափ ատում և խրտատարութեամբ հալածում էք, որպէս ատեցին և հալածեցին հազարաւոր տարի առաջ Քրիստոսին: Ձեզ ճշմարտութիւն

1. Մեզ գրողներից խնդրում է գրեն լազգ, մաքուր և անպայման բոլորի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնն իրեն է վերապահում թրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք մերժում ենք «Ի» և «Ի» ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ — ու — օվ:
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերապահում: Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յիս ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. 2ի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի իսկական անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ շտապաւոր պէտքում չուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնն իրեն զերծ է հաճաքում պատասխանատուութիւնից:
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնն բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

են ասում, բացատրութիւն պահանջում կամ տալիս, սակայն դուր չուտ էք տալիս ձեք «հայկական բիթը», զի էք սրնուցանում ձեք սրտում և թակարդ լաւում ճշմարտախօսի դէմ:

Աշխարհի փողը ձեզ համար պաշտամունք դարձրած՝ դուր տարիներով չէք երևում եկեղեցում, և յայտնի չէ թէ դուր ինչո՞վ էք ոգևորում և ինչն է ձեք սրբութիւնը:

Իսկ եթէ պատահում է, որ մոլորուելով ժամ էք մտնում, ապա գալիս էք նախապէս շատ շերտ հոգատարութեամբ՝ «թեաք դռաններ» պատրաստած, անգամ Աստուծոց դրամ խնայելով, մինչդեռ ձեք վաճառքի ապրանքները Ռուսաստան, Պօլսա, և Բեռլինն են բոլորում:

Սթափուեցէ՛ք, թափ տուէ՛ք ձեզ, հեռու ափական այն վատ ու գծուած բարբերից, որոնք դարեւ շարունակ ծրծուել են մեր մէջ՝ մեզ շրջապատող և ընկած ժողովուրդներին:

Միշտ դիտեցէ՛ք ձեք կարօտ հարեւանին, օգնեցէ՛ք ընկերոջը, քաղաքացուն՝ երբ նա ճակտի քրտինքով ազնիւ աշխատանքի է ուղում կաշի և զբամական օժանդակութեան պէտք ունի:

Դուր «ինտելիգենտներ»:

Համարեցէ՛ք ձեզ անդամը հայութեան և օրը մի միթամորձոցի ենթարկելով ձեզ, մի խորթացէ՛ք ձեք ազգութիւնից: Թեքս դուր ձեզ «խոշորդէմք էք համարում և ամսյում, որ հայ էք ծնուել, այնուամենայնիւ այդ փոքրը հայութիւն էլ ձեզ համար տեղ ունի և ակնկալելիք ձեզնից, եթէ՛ դեռ իսպառ չէք խորթացել:

Թող այդ յոյզերն ու խոհերը ձեք սրտում ելե՛ք անեն, որպէս զի դուր էլ Խաչեցեալի նման յարութիւն առնէք սակայն ձեք եսամոլութիւնից, ամբարտաւանութիւնից, ժլատութիւնից, որ դառնաք կենդանի ու պիտանի անհատներ կարօտ մեր ազգի համար:

ՀԱՅԵՐԻ ԳԻՐԳԸ ՎՐԱՑ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ. 1)

Վրաց թագաւորութեան ինքնուրոյն գոյութեան ժամանակ հայերից յայտնի էին ինչպէս խոշոր գրամատէրներ, հետեւաւ անձնաւորութիւնները: Մզիվան Մանուչարը՝ Իրակլի Բ-ի ժամանակ, Վանելի Գեղուքը, Արտեմ Աստուածատուրեանցը՝ Գեղուքի ԺԲ. ի ժամանակ, Եղել են և ուրիշ շատ գրամատէրներ, սակայն սրանք նշանաւոր են և նրանով, որ տո-

Կատարեալ տարւոյն Վրաց արքայա-
նոս Գագիկ անդամներին և անուանի ա-
րքայապետներին՝ զրաւ վերցնելով նրան-
ցից բոլոր արքային կամ գեղական հողային
տէրութիւնները, կամ թէ ստանաւ
էին ինչպէս ապահովութիւն պետական
հարկերն ստանալու իրաւունքը. այսպէս
Գագիկ թագաւորը տոկոսով պարտք
վերցնելով պարոն Յակովբից 300 մանէթ,
պարտաւորուեալ է վճարել նրան պետական
հարկը արանը մտնող տուգանքներէն: 1799
թուականի Վրաց սարեգործեան մէջ
հարցում ենք հետեւեալ նամակը. «Ես
Գագիկ Գագիկ Գագիկ, պարտք վերցրի
էիք, Մէլքե Նաբէից, երկու հարկու
մասեթ զրամ, որ պէտք է վերագարձենք
քեզ լիովին՝ երբ որ սար գնացողները կը
վերագրաւան ամառանոցից: Խնդրում ենք
որ այս բանի մասին ոչ ոք չիմանայ: Մե-
լքե Նաբէին, որ մի պատուաւոր հայ
վաճառական էր, Վրաց թագաւորական
ընտանիքում մեծ հռչակ ունէր: Հայերի
գիշած հարստութիւնները ծԼ-դարում,
երբ վրացիները նիւթական միջոցների կող-
մից շատ սղգք վիճակի մէջ էին գտնուեալ,
այն աստիճանի հրապուրական դարձան
Վրաստանում, որ արքայազներից շատերը
ամուսնացան հայ հարուստ գերդաստան-
ների աղջիկների հետ:

Վրաստանի օրերի մարման ժամա-
նակ հայերը զօրեղ կերպով կենդանացել
էին իրենց ձեռքում նրա տնտեսական
կեանքը: Հայ ազգը Վրաստանի արշալոյ-
սի ժամանակ ինչպէս մի զօրող օղակ՝
մտնում էր քաղաքակրթութեան այն շրդ-
թայի մէջ, որ ընդգրկում էր Կովկասի
երկու հակադիր կողմերից՝ Պարսկաստա-
նից և Բելգանդիայից: Կապալաւորութեան
ժամանակ զրաւաշտական կրօնը ու կրա-
կի պաշտամունքը հաւասար թափով տա-
րածուած էին Հայաստանում ու Վրաստա-
նում, իսկ քրիստոնէական կրօնի լուսա-
ճառանչ ճառագայթների տարածման ժա-
մանակ՝ Կովկասի ու Փոքր Ասիայի այս
երկու սահմանակից երկիրներն առկայ-
ծում էին քրիստոնէական ոչ զօրեղ լուս-
տով մահմեդական ուղիներում, որ սպառ-
նում էր նրանց հեղեղելու իրանի ու
Տաճկաստանի կողմից: Քրիստոնէական կր-
քոնը բարեբաւարիկ հող հանդիսացաւ հա-
յերի համար, որի վրայ նրանք կարողա-
ցան մօտենալ վրացի ժողովրդին: Թեր-
թելով Վրաստանի տարեգրութեան էջե-
րը՝ մենք կատարելապէս համոզուեալ ենք,
որ Վրաց թագաւորները երբեք տարբե-
րութիւն չէին դնում Վրացիների ու
Հայերի մէջ՝ շնորհելով վերջիններին խղ-
ճի կատարեալ ազատութիւն և քաղաքա-
կան ու քաղաքացիական մեծ իրաւունք
ներ:

Քրիստոնէական կրօնի բոլոր դաւա-
նանքները Վրաստանում վայելում էին

կատարեալ ազատութիւն, վրացի ժողո-
վուրդը հակակրում էր միայն մահմեդա-
կանութեանը: Ժձ. դարուց Վրաստանում
սկսեց հայ լուսաւորչական կրօնի հետ
միտման տարածուել և կաթողիկոսութիւնը,
որի գլուխը՝ Պիոս Զ. պապը շնորհակալու-
թիւն յայտնեց Գագիկին ծԼ. թագաւորին.
այն պաշտպանութեան, որ վերջինս մա-
տուցեց պապի միսիոնարներին: Թէպէտ
և հայերն ու վրացիները երկու տարբեր
եկեղեցիներէն էին պատկանում, բայց և
այնպէս այս երկու ազգերի մէջ լաճախ
տեղի էին ունենում խառն ամուսնութիւն-
ներ, հարսանիքների և մկրտութիւնների
ժամանակ հայերն ու վրացիները շատ
անգամ փոխադարձաբար միմեանց քաւոր
էին դառնում: Այս երկու ազգերը յար-
գում էին փոխադարձաբար իրանց ուխ-
տաւորները: Դարերի ընթացքում սրանք
երկար ժամանակ ունեցել են անկեղծ
բարեկամական յարաբերութիւններ: Հա-
յերը կատարելապէս տիրապետում էին
վրաց լեզուին: Միով բանիւ Վրաստանի
պատմութիւնը ցոյց է տալիս որ այս
երկու ազգերի մէջ, գրեթէ, թշնամական
յարաբերութիւններ չաւտ քիչ են տեղի ու-
նեցել կամ թէ տեղի չեն ունեցել
և հայերը խոշոր ծառայութիւն են մա-
տուցել Վրաց ազգին:

(Վերջ)
Լ. Յէնոգեան

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ 1]
(30 ապրիլ յորհեանի առթիւ)

«Այնտեղ ուր արցունքը, չղթայ և աւեր,
Ուր լուռ է լուկ հառաք լալազին,
Քո քնարիցը թող ուրախ ձայնի,
Որ թշուառ երգի, բռնաւ չլսուին» (59)...

Բանաստեղծը և աւ հասարակ գե-
ղարուեստագէտը հարազատ ծնունդ է
իր միջավայրի, շրջապատի, ժամանակի,
որքան էլ կոյսն ու ծաղիկը, սարն ու ձո-
րը, բոլորն ու գեփիւրը, արշալոյսն ու
վերջալոյսը, բնական առուն ու գլխիւն
աղբիւրը գրաւեն, դիւթեն նրան, որքան
էլ քաղցր լինի «երկինք» վերիննայ, վիշտ,
հոգ սմուռնալ, «Լուսնու փայլի մէջ լողալ,
սաւառնեմ, աստղերին գրկել»... այնուամե-
նային և լուսնու իրականութեան ուղեւոր-
կանը սեւ քաղում է նրան ցած, վար
է բերում նրան երկնային գոհից՝ կեան-
քին մօտենալու, որովհետեւ նրան պարտք
ունի, «հարկ» ունի տալու (ամբոյսն իմ
աշխարհքը Յ. Յովովրեան): Եւ որքան,
խեղճ, տառապող, դարուոր զրկանքների
ու թշուառութիւնների ենթակալ ժողո-
վրդի ծոցից դուրս ելած լինի բանաստեղ-
ծը, այնքան աւելի տուր ու խիստ կըլինի
այդ անհրաժեշտ հրամանը, այնքան ա-
ւելի հարկ ու պարտք կը պահանջուի

1) Տե՛ս «Միտք» № 4

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԽԱՍՄԱՌԻՄ ԽԵՆԹԵՐԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ *)

Մտաւորական ցոյց է տալիս նաև, որ
խնթագողների թիւը արեւելեան նահանգներում
աւելի մեծ տոկոս է կազմում, քան թէ միջին-
նահանգներում, և այդ տոկոսը միջիննահանգ-
ներում աւելի մեծ է քան արեւմտեան նահանգնե-
րում: Պատճառը յայտնի է: Երեւելեան նա-
հանգները աւելի խիտ բնակչութիւն ունեն,
գործաւոր դասակարգը մեծ է, իսկ գործընթի-
նը՝ նախընտրում տարին տասներկու ամիս հազա-
րաւոր անգործ մարդիկ են լինում: Կործ. ճա-
րելու հոգսը և մոլապաղծութիւնը, ապրուստի
թանձութիւնը և կեանքի կռիւը աւելի խիտ
ու դժուար են բազմամարդ արեւելքում, քան թէ
արեւմտեան նահանգներում և այդ պատճառով
էլ խնթագողների թիւը (մտածողութիւնից և
մտաւորանքութիւնից) աւելի մեծ է լինում արեւ-

* Տե՛ս «Միտք» № 3

բանաստեղծից: Եւ ի՞նչ, ինչպէս կարող
է տպաւորուող, մեղմիկ օղի հոսանքից ան-
գամ թրթռացող լար—հոգին չազգուել
այն բարբառոս արարքներից, արհաւիրք
ներից ու ոճիրներից, որոնք սովորական
մարդու անգամ սիրտը կտրելու ուժն ունեն:

Յովհաննիսեան էլ տալիս է անհրա-
ժեշտ հարկեր: Եւ հազարի Լուսնին մղկա-
յող, աղի—արցունք թափել աւուր հայ-
րենիքի սէրը ծառանում է իր ողջ էու-
թեամբ նրա—Եւ հազարի զաւակների առջև:
Ուրիշ կերպ չէր կարող լինել: Հայրենի
երկրի իբրև գուժական թուշոյ քամին
սրտաճմիրկ տեսարաններ է պատկերա-
նում բանաստեղծի առջև, չորացած դաշ-
տեր:

Ուր հին աւերակ նոր աւերակին
Միտ անկ է տալիս, բոլոր կրծքերից լուկ
հառաչանք է թռչում դառնագին:
Ուր չկայ անգուսպ կրքերին սահման,
Ուր օր ու գիշեր խիստ դաւաճուին
Սպասում են անթիւ գոհեր բնութեան
Ուր չկայ ժպիտ մէկի երեսին:
Նա անցնելով արեւնաների հովիտներից,
չի մոռնում բերել բանաստեղծի համար
նուէրներ: Բայց ինչ նուէրներ:

... ոչ փնջեր վարդի
Այլ անդ պսակ, պսակ փայլից
Որ դարգարում է ճակատը հայի (13)
Ահա երգիչ հայրենիքը, մատնուած դա-
րաւոր ստրկութեան, արեւնաքամ: Արիւն
և միայն արեւն է երևում բանաստեղծի
աչքին:

«Այնտեղ հողեր արեւն, արեւն և սարեր,
Ջինջ աղբիւրներն էլ կտրել են արեւն:
Վտակը քերում է արեւնու քարեր» (110)

Եւ միթէ այսպիսի տխուր, թշուառ
վիճակը կթողնէ բանաստեղծին ուրախ
երգեր երգել, խնդալ ու գուարճանալ,
հիանալ ու սքանչանալ բնութեան հը-
րաշքերով: Պէ՛տ մեղեդիներ կարող է
հիշել նրա քնարը, եթէ ոչ պառն ողբի
ձայներ:

«Եւ միթէ ցաւոտ սրտից կը թռչն
Յնութեան և ոչ վշտալից ձայներ» (152)
Ծննդութեան ձայնը, ուրախ աղաղակն է՝
ոչ:

«Եւ կիչրեմ քնարն ոսկի
Թէ որ նորա լարերից
Երջանկութեան, ուրախ երգի
Թռչնի ձայնը ողբից» (78):

Երգիչը կտրում է քնարի կենսաթր-
թիւ լարերը և նրանց տեղ ողբի ու սգի,
վշտի և հաւաքի լարեր ձգում: Նա չի
լուռ, ի հարկէ, պանծանք է լուել, երբ
այսպիսի մեծ է և անծար չարիք, բայց
չի էլ երգում, կոծում է, հառաչում,
իր յոյսը խառնում ընդհանուր ողբին
(119): Ոչ միայն այդքան, նա հրաժեշտ
է տալիս իր էութեան կիսին, անհատա-
կան սէրը զոհ է բերում հայրենիքի սի-
րոյ սեղանի վրայ:

Հայկական վերածննդութեան շրջանի
քաղաքացի և հրապարակախօս բանաստեղ-

ծներէն—Ռ. Պատկանեանից և Ս. Զահա-
ղիից կտակուած ժառանգութիւնն է
այդ. լաւուն հայրենիքի սիրոյ զոհել ան-
հատական ամենամաքուր, ամենաբարձր—
իդէալական սէրը (Լուսնի վիշտ 46, 47
երես): «Եւ մի սիրտ 178, և Պատկան-
եանի «Ստար կինն ինձ ասաց իմանալ»:
Հոգեւոր ծնողների գծած շաւղով է ըն-
թանում և Յովհաննիսեանը. նա՛ իր սիր-
տը չի տալիս իր հոգեակին, պահում է
«ժողովուրդեան հազարաւոր բոցի»
զոհների, «հակառակ խորթ որդոց հա-
մար» (30): Նրա մօտան ձեռք է բա-
շել նենգաւոր կոյտներից, փշաւ պսակ է
ղրել գլխին և երգչին երգել է տալիս
ստրկու հայրենիքի կուռ շղթաները:

Այսպէս բանաստեղծը հրաժեշտ տալով
բնութեան սքանչելիքներին, համարյոյն
ու սիրուն, «գեթաթ ճիւղաւ չքնաղ
կոյսին» ու «վայելչութեան պարտաւ ժա-
մերին», նուիրում է իր քնարը հայրենի-
քի վշտերն ու ցաւերը երգելուն, հայրե-
նակցների դարգն ու հոգսը երգելուն:

Որպէս ժողովրդի զաւակ՝ աւելի պայծառ
ու պարզ կերպով է բնութան հայրենա-
կիցների վիճակը, ցաւալի տրտմութիւնը. ըմ-
բռնում և համակուում նրանց վշտով ու
ցաւով, սիրում նրանց լացն ու հառա-
չանքը:

«Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճ լացը, հաւաքանք,
Ես քնարս երկրեցի
Վիշտ երգելու և տանջանք» (65):
Հայրենիքի, ազգակիցների և ժողո-
վրդի սէրը քիչ է մնում բանաստեղծին
գլորի միանգամայն խորթ շրջան, «այ
նրա քնարին մի ուղղութիւն, որը բոլո-
րովին հակառակ է նրա հոգեւ տնթեան»,
խառնուածքին: Եթէ նախնական զոր-
չին միանգամայն բնական է և սաղակաւ
արտադրել:

«Ես պիտի գուրս գամ դէպի հրապարակ
Առանց քնարի, անգար խաղերով,
Ես պիտի գուրս, պիտի բողբոջեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմով,
Դժբանակութեան օրեր»՝ Ս. Նալբանդեան)

Յովհաննիսեանի համար միանգամայն
խորթ և անհարազատ է նոյն այդ մօ-
տերը. նա կուռ ոչ, հրապարակախօս
չէ, նա երգիչ է, վշտալի, քնքոյշ երգերի
չէնց այդ պատճառով էլ, երբ նա եր-
գում է:

«Գուրս եկ ասպարէզ մահաւթ կուռի,
Թուռով թաթախուած առ կարող գրի
Անխալ դատիւ եղեւնազորին,
Մեծատան երեսն այրիւր ամբողջ
Մեր բոլոր ախտեր ցոյց տուր աշխարհին
Խայտառակութեան անարգ պատկով» (51-52)

Մեր ականքին մի հնչելն է, մի ան-
հարազատ, ընդհանուր նուագի մէջ գիտ-
սանսն մի հնչելն:

Նորայր
(Բաքուական)

հետ խօսելու ձևի համար. պէտք է չգրաւոր
խօսքերով, կամ կոպիտ հրամաններով. պէտք է
—գրաւոր նրանց վստահութիւնը դէպի քեզ:
Մի անգամ որ այդ քեզ յաղորդեց, էլ նրանք
վստահաւոր չեն քեզ համար, ոչ էլ դու նրանց
համար: Եստ ասուր նկատողութիւն ունին նը-
րանք: Նրանց աշխարհութիւնից չի վրկում ոչ
մի կասկածաւոր շարժում, չորոգործող լեզու
և կամ կեղծ ծիծաղ: Անմիջապէս վրեժի
տալիս քո կեղծութիւնը: Մարդ չուարում, զար-
մանում է թէ նրանք, այդ լեւնեմանքներն
ընդհանուր մի նկատում այդ բոլորը, բայց իր-
դութիւն է որ նկատում են: Եւ պէտք է ցոյց
չտալ որ նրանցից վրեժնում ես, քեզն ու այդ
բանը խնայում, ինչպէս կատուն թռչում որսա-
լու ժամանակ, սրանք էլ միտ մի շարժումներ
են փնտում յարձակուել վրադ:

Սրանցից մէկը մի անգամ մի ուրիշ խնթի
կողմից քանկով անդմէջ պատին և, մինչ
ծառայողների օգնութեան հասնելը, խողով
նրան: Միւսները կանգնած թամաշա էին ա-
նում առանց եղած մի անսովոր բան համարե-
լու: Այդպիսիներն մենք պահում էինք երկու
թեւեր մէջին կապած (ոչ չգիտայի):
Իր. Թալաթ Միլ. Վարդանան

1) Հեղատուներ

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕՒԱՅԱՅՆ
(Երօթօն)

Անգլիայում անցնել տարի փորձեր էին կատարում մարդկային ձայնը ընդհանուր հնչողության համար մի հնար գտնելու և այդ ձայներն էլ արդեն պատկերել են հրաշալի արդիւնքով: Գրիֆիթ Մարիոլին է այդ մեծ գիտնականը հնարիչը, որ իւր արտադրած մեքենան ի ներկայութեան բազում գիտնականների լուրջ մի փորձի ենթարկեց: Նրան փակեցին Լոնդոնի հաստատապիտան շէնքերից մէկի սենեակում, որը 9 մատնաչափ պողպատով և 9 մատնաչափ աղու իւսով շրջապատուած էր, իսկ սենեակի և դռնի աշխարհի միջև եղած հնաւորութիւնը 6 ոտք էր: Այդ տեղից նա իւր հնարած մի փոքրիկ զրպանի գործիքի միջոցով շէնքի հնաւոր ծալում գտնուող մի ուրիշ անձի հետ խօսակցեց: Զայնի փոխանցումը այնքան որոշ էր և յստակ, որ ներկայ եղողները մինչև իսկ նրա ժամացույցի թիւ-թաքը լսում էին, չնայած երկու գործիքների միջև եղած անթափանցելի զանգուածին:

Հնարիչը իւր փորձերը աւելի մեծ հնաւորութեանց վրայ է կատարում. անցնել տարի սեպտեմբերին նա 5 1/2 մղոն հնաւորութեան վրայ կատարեալ լաշողութեամբ խօսակցեց և այժմ պատրաստուած է 25 մղոնից խօսելու: Եթէ նա իւր այս փորձում էլ յաջողի, այնուհետև մի վերջնական փորձ էլ պիտի կատարէ, որ լետոյ Անգլիական կառավարութեան հետ բանակցութեան պիտի մտնէ իւր այս հրաշալի գիտք մենավաճառ դարձնելու: Մը. Մաթիլդը մի թրդ-թաղէ հետ իւր գիտնական մասին խօսելիս ասել է, որ իւր գործիքի օգի մէջ արտադրած թուրութեամբ բոլորովին նման չեն Մարիոլին սխտեմի անթել հնաւորի «էնթրեան» կոչուած «ալիքներին»: Իսկապէս նրանք օգային ալիքներ չեն բոլորովին, որովհետև ձայնը այդ գործիքով ալիքային ելեւէջներ և ընդհարումներ չունի: Էնթրեան ալիքների նման, այլ միակերպ է և շարունակական, որով հնարաւոր է դառնում մարդկային ձայնը խօսելիս, իւր բոլոր ելեւէջերով և տոներով այնպիսի ներթուրեամբ փոխանակել, որ խօսակցի ձայնը կատարելապէս ճանաչելի է դառնում, ինչպէս սինեմատոգրաֆի մի նկարում գծերը այնքան արագորէն և շարունակաբար միմեանց լաշողում են, որով իսկական պատկերը նկարւում է: Հնարիչը իւր այս հրաշալի գործիքին «Էրօթօն» օգնական անունն է յատկացրել: Մի ամբողջ կազմած այդ գործիքների 5 մղոն ճառագայթի համար՝ արժելու է մօտաւորապէս 48—50 թուման. գործելակերպը շատ պարզ է և ամեն մարդ կարող է առանց որևէ դժուարութեան ժամացույցի պէս գործ ածել:

Մ. Պ.

ԱՄԲՈՂ ԱՅԻԱՐԻ ՈՍԿԻՆ

1911 թուի վերջին աթուրում, Փրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնները խիստ լարուելով Մարոկկոյի հարցում—ուր արդէն Փրանսիան զօրք էր մտցրել և փորձում էր եթէ ոչ գրաւելու գոնէ ազդեցութիւնն աւելացնելու—ըստ ամբողջ օպտուում էր պատերազմի փոթորիկ բռնկման: Սակայն երկու հարեան պետութիւնները գէպ իւրար ունեցած մեծ հակակրօնութեամբ հանգրձն, մանաւանդ 1870—71-ի Փրանսիոյ գերման պատերազմից այս կողմ, չկամեալով հազարաւոր զուցէ միջնորդութեամբ:

մարդկանց արեւը թափել, բարւաք համարեցին խաղաղ վախճան աւել գործին, ինչպէս որ լաշողութեանց այդ վերջին նոր լեմբերեան դաշնագրով:

Բոլորս էլ լաւ գիտենք, թէ մի երկրում հարստութիւնը որքան է իրականացնում լաշողութիւնը պատերազմի ժամանակ: Ուստի, մի գաղափար կազմելու համար Եւրոպական պետութիւնների ոսկով հարստութեան մասին, քաղաքաբար այստեղ կրեւրենք մի Փրանսիացու լուրջ յօդուածը իւրաքանչիւր տէրութեան ունեցած կամխիկ ոսկու մասին, համեմատութեան մէջ դնելով այն՝ Փրանսիայի ունեցածի հետ:

Վերջին սեպտեմբերի առաջին կիսուամի քարհուրելի երկիւղ տիրել էր գերմանական մեծ քաղաքներին: Ամեն տեղ պատերազմից էին խօսում, երբ դեռ Փրանսիական զենապանի և կայսերական դիւանապետի մէջ բանակցութիւններ էին տեղի ունենում Մարոկկոյի համաձայնութեան լաշողութեան համար: Հասարակութիւնը՝ խռնուած խախտողական բանաւորների դռնակների առաջ, պահանջում է իւր աւանդ տուած փողը: Բերլինում, Կէնիգսբերգում և ուրիշ շատ տեղերում պարտատէրերը մերժում են թղթագրամները և պահանջում, որ իրենց փողը ոսկով տրուի: Սենտկլոթիւնները իրար են լաշողում: Մի տեղ՝ մի վաճառական չը կարողանալով տանել բանկերում կրած մեծ կորուստների վիշտը, անձնապանուծութիւն է գործում: Այլ տեղ բանկի կառավարիչն է գլուխ առած փախչում: Իրաւնցումը կատարեալ է. Ամենաբարձր արժէքները իջնում են ամենացածրի:

Բայց ինչու, ինչ էր այդ բոլորի պատճառը:

—Պատճառը՝ ոսկու պակասութիւնն էր:

Հէնց որ հորիզոնը մռայլուց և տենեմուց ող վաղը ապահովուած չէ, քանազան երկրների հսկայ կապիտալները, որ Գերմանիայում ֆինանսական դրութիւնը ոտքի վրայ էին պահում՝ հետ կանչուեցան: Ինչպէս որ թուրքները ֆոթուրիկ երևան գալուց առաջ օրընթաց ըշտապում են իրենց բոլոր, այնպէս էլ անգլիական, Փրանսիական, շուէդական և այլն սակիները, շտապեցին մտնել իրենց փարախը: Գերմանական լրագրների ասուածութեամբ՝ լետ պահանջուած օտար կապիտալների գումարը հասաւ երկու միլիարդ միլիոնի: Պատճառը շատ պարզ է. Գերմանիան չունենալով բաւական ոսկի 60 միլիոն բնակչութեան և օրէցօր աճուած արդիւնաբերութեան համար, ստիպուած է կրիգիտով ապրել: Օտար ոսկին փրկում է նրան կործանումից, բառիս իսկական իմաստով:

Փրանսիան այդ տեսակ աղէտներից վախենալու բան չունի, որովհետև նա աշխարհիս բոլոր պետութիւններից աւելի ոսկի ունի: Ոսկին կրեւրեմի զօրավիճն է, ինչպէս ամուր և միաձուլ սիւները մի ծանր շէնքի պաշտպանը: 1908 թուի ճշգրիտ և խիստ կատարուած քննութիւնները ցոյց են տուել, որ Փրանսիան միջ միլիարդ վեց հազար միլիոն զուտ ոսկի 1) ունի: 1909-ի աշխարհամիջրէին Փրանսիան ունեցել է 39 միլիոն 350 հազար բնակիչ. ուրեմն՝ եթէ այդ ունեցած փողը բաժանէին այդքան բնակչութեան վրայ, իւրաքանչիւրին—զառամեալին ինչպէս նաև ծծկեր երեխային—միջին հաշուով 167 ֆր. ոսկի կընկնէր:

Անշուշտ կան ուրիշ ոսկով հարուստ ազգեր էլ, ինչպէս օրն. (հաշուելով նոյն ձևով. այսինքն եղած ոսկին բաժանելով բնակչութեան վրայ). Ամերիկացին ունի

1) Այստեղ բերուած բոլոր գումարները հաշուած են ոսկով և ֆրանկով միայն:

Ա. Օ.

90 ֆր. Գերմանացին՝ 85, Անգլիացին՝ 55, Ռուսը՝ 33, Բելճիկացին՝ 22 ֆր. և այլն: Այդ գումարները թէպէտ փոքր չեն, բայց համեմատելով Փրանսիացու ունեցածի հետ շատ ցածր են: Դեռ 1907-ի հոկտեմբերին էր, որ Միացեալ—Նահանգներին սարսափը պատելով՝ Փրանսիան իւր ոսկին օգնութեան հասցրեց և փարատեց պանիկը (երկիւղը):

Փրանսիայական այդ վեց միլիարդ վեց հարիւր միլիոն ոսկիները գտնուում են մասամբ իրենց տէրերի մօտ, մասամբ էլ «Բանկ-դե-Փրանս»-ում, օտար սակիները գտնուում են պետական այլ բանկերում: Թրեակայութեամբ ող չի պատկերացրել ոսկու դրամների կոյուր, որ շարունակ բանաւորուած են մնում վերալիցեալ բանկի ներքնատներում, որպէս մի անառիկ բերդում: 1906 թուի հոկտեմբեր ամսին այդ ներքնատները պարունակում էին ուղիղ 3 միլիարդ 619 միլիոն:

Թերթերում լաճախ են նկարագրել Բանկ-դե-Փրանսի ստորերկրեանների մասին, որոնց (Միջին դարի ամուր դղեակների սարսափելի ստորերկրեանների նման) երկաթեայ դռները զինուած են երրեակ փականքներով: Մի նեղ, հոգիւ մի մարդու համար, անցանելի ողորապօղոսանդուիք տանում է այդ ներքնատները: Սրանք այնպէս են սարքուած. որ վարկենաբար կարող են բերնէբերան կամ աւազով լըցնել և կամ ջրով: Սակայն այս բոլոր ըզգուշութիւններով հանգրձն, սրանից մօտաւորապէս տասը տարի առաջ, 1902 թ. սեպտ. 12-ին, մի գող—որին չկարողացան գտնել—թափանցեց այդ հազարու մի գիշերների աշխարհը և տարաւ 520 հազար ֆրանկ: Մի ուրիշ նման դէպք որի հերոսը սակայն աւելի վեհանմն է գտնուել, պատահել է Անգլիայում Անգլիական Արքայական բանկում, որ ունէր 860 միլիոն: Դա մի հասարակ կողմից էր Լոնդոնում: Մի օր ներկայանում է բանկի հզօր խնամակալներին և նրանց ասում. «Հաճառակ ձեր բոլոր զգուշութեանց, հակառակ ձեր երկաթեայ դռների և անհամար պահպանների, ես լայտնում եմ որ կարող եմ մտնել ձեր գանձարանները: Փորձեցեք եթէ կամենում էք: Խնամակալները ընդունում են առաջարկը և մի գիշեր—ոսկու այս դամբարաններում միջոց գիշեր է լինում—ի զարմանք բոլորի, կողմիցիցից գտնում են գանձարանում հանգրիստ նստած և մէջըը միլիոնների սեգուկներին յենած: Բանկի բոլոր ջանքերը գտնելու թէ այդ մարդը որտեղից մտաւ այդտեղ, իզուր անցան և որպէսզի ոսկիներից գիւթուած ագնիւ մարդը անազնիւ զիտաւորութեամբ չմտնէր այնտեղ, մի չաղ կենսաթոշակ են նշանակում նրան:

Արե. Օրդ.—Եան

(Կը ճարտանկութիւն)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրից 5 Մարտ.

„Միտք“ շաբաթաթերթի լարգոյ պ. խմբագրին.

Վաղուց մենք պետք էինք զգում մի անկախ Թերթի. և այդպիսին, լուրախութիւն մեր, ասպարէզ եկաւ յանձին „Միտք“:

Դուք, ձեր „Միտք“, առաջին համարում և առաջին խմբագրականում այսպէս էք գրում.—

„Մենք հրապարակ ենք գալիս անկախ որևէ կուսակցութիւնից, մենք մենակ և մեր իսկ ձեռներեցութեամբ: Եւ մեր ձեռնարկի յարատեւութիւնը մենք տեսնում ենք... ընթերցող գաւթ համակրութեան մէջ“:

Եթէ դուք գրէք և գործէք ինչպէս

որ խոստանում էք, եթէ լինէք անկախ կուսակցութիւններից, եթէ ձեր Թերթի մէջ չմտնէք կուսակցական, այն էլ նեղ, ոգի և կուսակցական հաշիւներ, պատճառ չկայ մտածելու թէ՛ ձեր Թերթը ինչու պիտի չլաշողի:

Եղէք և մնացէք անկախ, և դուք կտեսնէք որ ձեր Թերթը կտարածուի բոլոր խաւերում: Պահեցէք ձեր խոստումը, կանգնեցէք ձեր խօսքի վրայ հաստատ, և դուք կտեսնէք որ այն „ընթերցող գաւթ“, որի „համակրութեան մէջ էք տեսնում ձեր ձեռնարկի լարտեւութիւնը“ կլինի ձեր հետ“:

Համակիր

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹԱԻՐԻԶ

Մարտ 14-ին ժամը 1-ին Թաւրից դէպք Ռուսաստան միկնեց զենեայ հիւպատոս պ. Միլլերը: Հիւպատոսին ճանապարհ զննելու էին զնացի մեծ թուով մարդիկ, կային 39 կառքեր, ձամբու զննու էր եկել և Սարգար Ռաշիգ-Սոթը:

Մարտ 15-ին բոլոր ռուսահպատակները, վաճառականների աւազ պ. 2, նազարբէգեանի գրաւոր Հրաւիրանք ներկայացան նորիկ հիւպատոս պ. Բրիտարա-ժենկուն:

Արամեան դպրոցի հոգաբարձութեան ամիսներ առաջ արած դիմումին ի պատասխան պ. 2. նազարբէգեանն ասաց, որ ինքը Թիֆլիզում ներկայացել և միջոցով է գնեկալ Կախանովիւն զըպրոցին հասանելից կայսերական նպաստի—1425ր.—մասին: Գնեկալը յայտնել է, որ այդ նպաստի նախահաշիւը չի մտել փոխարքայի դիւանատան հաշիւների մէջ. և որպէս զի նպաստը ստացուի, զնեկալը խորհուրդ է տուել, որ կօնսուրն պատեղից միջնորդութիւն յարուցի այդ մասին: Արդէն յայտնել ենք այդ միջնորդութեան մասին Թերթիս նախորդ համարներով:

Ամսոյս 21-ին, ժամը 11-ին պ. Բրիտարա-ժենկուն պայտելութեան էր եկել առաջնորդ Կարապետ սրբազանին: Ի պատասխան սրբազանի խնդրին, պ. հիւպատոսը խոստացել է կարգադրել, որ Խոյի Զօրաւ թուրք գիւղատեղը այլ ևս դադարեցնի հալածանքը հայ գիւղացոց դէմ:

Թաւրիցի մեր ճանգարաններ մտնում է իսպառ. անտերութեան: Ուր է թեմական իշխանութիւնը: Ինչու չի կանչում պատշաճ մարմիններին և չի հըրահանում ցոյց տան լուրջ վերաբերմունք: Մինչև ե՞րբ թուրք պղծպաշտ մաշի առաջնորդարանի և քահանայի դռները:

Երբ մեր աչքի առաջ պայտիսի անտերութիւն է տիրում, ինչու այլ ևս դարմանայ, որ Դուխարդանի ազգային հոգիւր օրէց օր կրանում են:

Մեր բաժանորդներից մի քանիսին յայտնում ենք, որ մեր Թերթի հաշիւը կապ չունի մի այլ հաշուի հետ: Սա զուտ մեր անհատական ձեռնարկութիւնն է և ոչ մի կապ չունի կամ շարունակութիւն չէ այլ Թերթի:

Թերթիս լաշողը համարը, 2ամական տոների արձակուրդի և ապարանի փակ լինելու պատճառաւ, Կիսապարական Սպրիլ 14-ին:

Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը Ահարի հեռագիրը ամսոյս 23-ին մի խնդրագրով ուղարկեց Սարգար Ռաշիգին և խնդրեց հետամտել Իրաւահիմ խանին ձերբակալելու, որ դպրոցապետական պիւղերից 103 թմ. հարկ է առել:

Արամեան դպրոցին նուէր է ուղարկել Դահիւրից (եղիպտոս) Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

1) Այս նամակը վաղուց ստացուած է շարուած էր, սակայն նիւթերի առատութեան պատճառով ուշացել էր տպումը: Ժ. Խ.

